Հավելված N 2
ՀՀ կառավարության 2024 թվականի
փետրվարի 1-ի N 171 - Ն որոշման

# ԱՇԽԱՏԱԿԱՐԳ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառության և ապօրինի շրջանառության կանխարգելման միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) գործունեության կազմակերպման հարցերը, ինչպես նաև սահմանվում են թմրամիջոցների ու հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառության և ապօրինի շրջանառության կանխարգելման բնագավառում պետական լիազորված մարմինների կողմից համաձայնեցված գործունեության ապահովման նպատակով միջգերատեսչական հանձնաժողովի հիմնական խնդիրները:

2. Միջգերատեսչական հանձնաժողովը խորհրդակցական մարմին է, որը թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառության և ապօրինի շրջանառության կանխարգելման բնագավառում պետական լիազորված մարմինների արդյունավետ համագործակցության համար ապահովում է նշված պետական մարմինների միջև մշտական հաղորդակցություն, ինչպես նաև նշված բնագավառի հիմնախնդիրների արդյունավետ լուծման նպատակով պետական լիազորված մարմիններին ներկայացնում է առաջարկություններ: Միջգերատեսչական հանձնաժողովի անդամները հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում են հասարակական հիմունքներով:

## 2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3. Հանձնաժողովի հիմնական խնդիրներն են՝

1) թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառության նկատմամբ հսկողությանը (վերահսկողությանը) և ապօրինի շրջանառության կանխարգելմանը, դրանց ապօրինի շրջանառության դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը, կանխարգելման բնագավառում պետական լիազորված մարմինների համագործակցությանը, ինչպես նաև թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառության նկատմամբ հսկողության (վերահսկողության) և դրանց ապօրինի շրջանառության դեմ պայքարում Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների կատարմանն աջակցելը.

2) թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության ու թմրամոլության կանխարգելման և դրա դեմ պայքարի հարցերով թիրախային տեղեկատվական աշխատանքների կազմակերպումը, այդ թվում՝ արձանագրված դրական փորձի տարածումը.

3) համացանցի միջոցով կատարվող թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի նպատակով անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելուն և առաջավոր փորձը ներդնելուն աջակցելը, այդ նպատակով միջազգային փորձի ուսումնասիրությունը.

4) թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառության նկատմամբ հսկողության (վերահսկողության) և դրանց ապօրինի շրջանառության վերաբերյալ պետական լիազորված մարմինների տրամադրության տակ գտնվող տեղեկատվության փոխանակման դյուրացումը:

4. Հանձնաժողովն իր առջև դրված հիմնական խնդիրներին համապատասխան՝

1) աջակցում է պետական մարմինների կողմից թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառության նկատմամբ հսկողության (վերահսկողության) և ապօրինի շրջանառության կանխարգելման աշխատանքների համակարգմանը.

2) աջակցում է թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառության նկատմամբ հսկողության (վերահսկողության) և ապօրինի

շրջանառության կանխարգելման, թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության (այդ թվում՝ համացանցի միջոցով կատարվող) դեմ պայքարի ոլորտում միջազգային առաջավոր փորձի ներդրմանը.

3) թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառության նկատմամբ հսկողության (վերահսկողության) և դրանց ապօրինի շրջանառության, դրա հետ կապված հանրային առողջության բնագավառի վերաբերյալ տեղեկատվության ամբողջականության ապահովման, հսկողության (վերահսկողության) և ապօրինի շրջանառության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման նպատակով մշտական հաղորդակցության միջոցով դյուրացնում է պետական լիազորված մարմինների տրամադրության տակ գտնվող համապատասխան տեղեկատվության (այդ թվում՝ թմրամիջոցներից և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերից կախվածություն ունեցող անձանց վերաբերյալ) փոխանակումը.

4) թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառության նկատմամբ հսկողության (վերահսկողության) և ապօրինի շրջանառության կանխարգելման միջոցառումների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, այդ թվում՝ թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի աշխատանքների տարեկան ծրագրի հաշվետվության վերլուծության հիման վրա, թմրամիջոցների ու հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառության և ապօրինի շրջանառության կանխարգելման բնագավառում պետական լիազորված մարմիններին գրավոր առաջարկություններ է ներկայացնում օրենսդրության կատարելագործման, համապատասխան պայմանագրեր մշակելու կամ կնքելու վերաբերյալ.

5) քննարկում և հաստատում է հանձնաժողովի աշխատանքային պլանը, փոփոխություններ ու լրացումներ է կատարում դրանում, քննարկում հանձնաժողովի աշխատանքային պլանով նախատեսված միջոցառումների կատարման ընթացքը:

5. Հանձնաժողովն իր առջև դրված խնդիրների իրականացման նպատակով կարող է պետական մարմիններից և կազմակերպություններից հայցել թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառության հսկողության (վերահսկողության) և ապօրինի շրջանառության կանխարգելման հարցերին առնչվող օրենքով չարգելված տեղեկատվություն:

6. Հանձնաժողովն իր գործունեությամբ չի կարող միջամտել Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների ընթացիկ գործունեությանը:

## 3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

7. Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվում են նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության, բայց առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ: Հանձնաժողովի նիստերի հրավիրման օրվա, վայրի, ժամանակի և օրակարգի մասին հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի անդամներին գրավոր ծանուցում է նիստի օրվանից առնվազն 5 օր առաջ: Պետական լիազորված մարմինների արդյունավետ համագործակցության ապահովման նպատակով հանձնաժողովի անդամները պահպանում են մշտական հաղորդակցություն:

8. Հանձնաժողովի արտահերթ նիստեր կարող են հրավիրվել հանձնաժողովի նախագահի կողմից կամ հանձնաժողովի անդամների առնվազն մեկ երրորդի պահանջով:

9. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

10. Հանձնաժողովի նիստն արձանագրվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից: Նիստի արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նախագահը և հանձնաժողովի քարտուղարը:

11. Հանձնաժողովի նախագահը՝

1) համակարգում է հանձնաժողովի աշխատանքները.

2) հրավիրում է հանձնաժողովի նիստեր և նախագահում դրանք.

3) նախապատրաստում է առաջարկություններ հանձնաժողովի աշխատանքային պլանների կազմման և կատարման վերաբերյալ.

4) ստորագրում է հանձնաժողովի գործունեությանն առնչվող փաստաթղթերը.

5) ներկայացնում է հանձնաժողովը պետական մարմիններում և կազմակերպություններում.

6) իր բացակայության դեպքում հանձնաժողովի անդամներից մեկին հանձնարարում է վարել միջգերատեսչական հանձնաժողովի նիստը.

7) իրականացնում է սույն աշխատակարգից բխող այլ լիազորություններ:

12. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է հանձնաժողովի նիստերին.

2) մասնակցում է թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի աշխատանքների տարեկան ծրագրի, հանձնաժողովի աշխատանքային պլանների մշակմանը և հանձնաժողովի աշխատանքային պլանների իրականացմանը.

3) ներկայացնում է առաջարկություններ հանձնաժողովի գործունեության, հանձնաժողովի նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ.

4) ծանոթանում է հանձնաժողովի նիստերի արձանագրություններին.

5) իրականացնում է հանձնաժողովին վերապահված այլ գործառույթներ:

13. Հանձնաժողովի անդամը հանձնաժողովի նիստերին հարգելի պատճառով չմասնակցելու դեպքում պարտավոր է դրա մասին նախապես տեղյակ պահել հանձնաժողովի նախագահին:

14. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ հանձնաժողովի անդամներին տեղեկացնում է նիստերի հրավիրման օրվա, վայրի, ժամանակի և օրակարգի մասին.

2) հանձնաժողովի նիստին առնչվող փաստաթղթերը ներկայացնում է հանձնաժողովի նիստին.

3) արձանագրում է հանձնաժողովի նիստը և վարում հանձնաժողովի գործունեության հետ կապված գրագրությունը.

4) իրականացնում է սույն աշխատակարգով իրեն վերապահված այլ լիազորություններ:

15. Հանձնաժողովի գործունեության կազմակերպական-տեխնիկական աշխատանքների և անհրաժեշտ գրագրությունների իրականացումն ապահովում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության քրեական ոստիկանության գլխավոր վարչությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

01.02.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ